ConverseBank

Վարկատուի լոգո (սեղմել և բեռնել)

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Հավելված 1
«Հավելված 15

Գործողության սկիզբ 12/02/2018 Ավարտ Չի սահմանվում

Ուշադրություն՝ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ,** որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Վարկի անվանում	Ոսկու ստանդարտ ձուլակտորի ձեռքբերման վարկ	
2.2 Վարկի գումար	100,000 - 8,000,000	ՀՀ դրամ
2.3 Վարկի ժամկետ	12 - 36	ամիս
2.4 Տարեկան անվանական % (ՏԱՏ)	18.5	

Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:

2.5 Տարեկան փաստացի % (ՏՓՏ)	21.51 - 23.86	

Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելին, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:

1.

Վարկատուի անվանումը	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գտնվելու վայր	ՀՀ, ք.Երևան, Վ. Սարգսյան 26/1
Հեռ.	+(37410) 511 211
Էլ.փոստ	post@conversebank.am

3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

☑ **3.1 Գրավ** — Ձեռքբերվող ոսկու ստանդարտացված ձուլակտոր

☐ **3.2 Երաշխավորություն** — Չի պահանջվում

4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Վարկ/գրավ հարաբերակցություն	90	%	**4.3 Կանխավճար/վարկ հարաբերակցություն**	Չի պահանջվում	%

4.2 Մարումների հաճախականություն

◉ **Մայր գումար**	Ամսական	*Այլ հաճախականության դեպքում նշել ձևը*	Կատարվում է անուիտետային եղանակով
◉ **Տոկոսագումար**	Ամսական		

5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

5.1 Վարկային հայտի ուսումնասիրության	Չի պահանջվում
5.2 Վարկի սպասարկման	Չի պահանջվում
5.3 Գրավի գնահատման	Չի պահանջվում
5.4 Նոտարական վավերացման	Չի պահանջվում
5.5 Գրավի ապահովագրության	Չի պահանջվում
5.6 Այլ միջնորդավճարներ	Տրամադրման վճար - վարկի գումարի 1.5% միանվագ

5.7 Ընդամենը այլ վճարներ	1.5% միանվագ

Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար

6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):

Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:

7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՏՈՒԺԴ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում	Ժամկետանց գումարի 0.13%, օրական
7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում	Ժամկետանց գումարի 0.13%, օրական
7.3 Այլ վճարներ	Չի պահանջվում

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող էկարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

◉	Անձը հաստատող փաստաթուղթ	○	
◉	ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք	○	
◉	Նույնականացման քարտի դեպքում ՀԾՀ չի պահանջվում	○	
○		○	

9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ 1 *օր*

Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ 1 *օր*

Վարկը տրամադրելու ժամկետ 1 *օր* *(Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո:)*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵԶ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՍ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

Ի՞ՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝ այցելելով Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

»